ՎԵՑԵՐՈՐԴ ՏԱՐԻ

# ԽԱԹԱԲԱԼԱ

Գինն է 10 կ. Գաւառներում 12 կ. 1911, Շաբաթ, Դեկտեմբերի 24-ին. Թիֆլիս. № 52.

## ՊԱՐՍԿԱԿԱՆ ԽՆԴԻՐԸ




Лит. С. Быхова

—Հարեւան, հարեւան, այդ առիւծի վրայ հեծել ես մենակ, սակայն կըխնդրեմ ինձ էլ տեղ տաս, որ նստեմ, ես էլ իրաւունք ունեմ, ղըկից եմ.

Բացւած է բաժանորդագրութիւն

# 1912 Թ.

VII Տարի

# ԽԱԹԱԲԱԼԱ

VII Տարի

Երգիծաբանական-սատիրական պատկերազարդ շաբաթաթերթի

[Ամենաանհրաժեշտ թերթը հայ ընտանիքների համար]

«ԽԱԹԱԲԱԼԱՆ» միակ հայ թերթն է, որ գոյնզգոյն նկարում է մեր գործիչներին։

«ԽԱԹԱԲԱԼԱՆ» հրատարակւում է ռուսական եւ եւրոպական հումօրիստիկ լաւագոյն թերթերի օրինակով եւ ո՛վ զարմանք՝ հայկական կեանքում։

«ԽԱԹԱԲԱԼԱՆ» շարունակում է այս տարի էլ իր աշխատակիցների հետ ազգակցական կապեր պահպանել եւ նրանց մասնակցութեամբ ծաղր ու ծանակի դարձնել նրանց՝ որոնք ծաղր ու ծանակի արժանի են։

«ԽԱԹԱԲԱԼԱՆ» ԲԱՐԵԿԱՄՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՈՒՄ։

ԽՆԱՄԻԱԿԱՆ ԿԱՊԵՐ ՆՈՅՆՊԷՍ

ԿԱՇԱՌՔ ԵՒՍ ԱՌԱՒԵԼ։

1912 թւին էլ մեր մշտական աշխատակիցներն են լինելու՝

## ԳՐԻՉՆ ՈՒ ԹԱՆԱՔԸ, ՆԵՐԿՆ ՈՒ ՀԱՆԱՔԸ

Առաջիկայ 1912 թւին մենք մեր բոլոր բաժանորդներին խոստանում ենք՝

1. Ամեն շաբաթ դարդոտ ժամանակ կուշտ ծիծաղեցնել:
2. Վշտերը փարատել—
3. Մարսողութիւնը կանոնաւորել (կուշտ ծիծաղելով)։
4. Մեր գործիչների իսկական պատկերների հետ ծանօթացնել:
5. Ամեն ցաւ ու դարդից, չար ու վշտից հեռու պահել։
6. Փողը ստանալիս՝ անդորրագիր տալ։
7. Հանդերձեալ աշ արհում Մէֆիստոֆելի միջոցաւ ցանկացողներին ոմանց դժոխք, ոմանց արքայութիւն առաջնորդել։
8. Իսկ անպարտաճանաչ եւ պարտքերը չվճարող բաժանորդներին եւ գործակալներին ԶԱՐԱՄՏՕՐԷՆ ՄՆԱՆԿԱՑԱԾ յայտարարել։

Այս բոլոր առաւելութիւնների համար «ԽԱԹԱԲԱԼԱՆ» գնահատում ենք՝

**Տարեկան 5 րուբլի, կէս տարին 3 րուբլի**

**Երեք ամիսը 1 ր. 50 կ. եւ ամիսը 50 կոպ.:**

Մեր ուղղամիտ բաժանորդներին առաջարկում ենք բաժանորդագրւել նաև «ՍՈՒՐՀԱՆԴԱԿ» ամենօրեայ գրական, քաղաքական, հասարակական և առևտրա-արդիւնաբերական թերթին, որի գինն է տարեկան **10** ր. կէս տարին **6** րուբլի

Իսկ „ՍՈՒՐՀԱՆԴԱԿ“ և „ԽԱԹԱԲԱԼԱ“ միասին

| | |
|---|---|
| Տարեկան . . . . | 12 ր. |
| Կէս տարին . . . . | 7 ր. |

«Սուրհանդակը» անհրաժեշտ է նամանաւանդ առևտրականներին

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ ԱՌԱՆՑ ՍԱԿԱՐԿՈՒԹԵԱՆ

Մեր հասցէն՝ Тифлисъ „Хатабала“.

ეროვნული ბიბლიოთეკა

«ԽԱԹԱԲԱԼԱՅԻ» ՕՐԱՑՈՅՑԸ

1911 **ԴԵԿՏԵՄԲԵՐ** 31 օր

# 24

Суббота **ՇԱԲԱԹ** შაბათი

Լուսնի 17

**25** (կիր.) Կրկնակի տօն մուքթա քէլխ ուտողաց և ուրիշի հաշւով քէֆ անողաց:

**26** (բ. շ.) Օր ամենայն դպրոցականաց, որք բազում ինչ սովորին, բայց բան չգիտեն. գրքանս մաշին, բայց ոչ հասկանան թէ ի մատենիս զինչ կայ և զինչ չկայ:

**27** (գ. շ.) Երկրորդ շաբթէպարձ ազգային խայտառակութեան: Զայսօր վասն Մեսրովբ եպիսկոպոսի համար ևս առաւել խրատական. զքիթ մի խոթէ այնտեղ՝ ուրտեղ դեռ ևս քեզ վաղաժամ է:

**28** (դ. շ.) Յիշատակ սրբոցն միրաժայ, որք ունէին խումբն Հորիզոնականաց եթէ կաթողիկոս լինէր ցանկալին իւրանց:

**29** (ե. շ.) Այսօր տօն քաւութեան վասն հաջի Համբարձումի Առաքելեան, որ իւրով մասնակցութեամբ առաւել փնասէ գործն, քանց թէ կարէ բան շինել: (Բարեկենդան):

**30** (ուրբ.) Պահք—որ ունիցէ՝ ուտիցէ, բայց որ չունիցէ զահրումար լիցէ:

**31** (շաբաթ) Վերջին օր տարւոյն: Յիշատակ մեղքաթողութեան և պարտականութեան մոռացման: Ողորմեցանք՝ եթէ զնիւխայս ստանամք:

Աստղ. տոմար. և օրացոյցագէտ

**Աղբեխոս**



## ԱՄԲՋՆՈՒԹԻՒՆ

Էս կաթղիկոսական խնթիրքը իրա մասալէքով խատակ վուր դաւիդարաբա էլաւ. ես հէնց գիդէի թէ խօսք ու գրիցը մինչևլի նընդրութենի վուխտն է ըլում, համա էրևում է, վուր էդ խընթրքի վրէն հիմի էլ պտի խօսք ու գըրից ըլի:

Տէրը փրկէ ազատէ փիս մարթու շարիցը, կրտած էծիցը, թևը կոտրած ճանջիցը, միրուքը վէր արած տէրտէրիցը, փակւած վարթապետիցը, ստասան ժուրնալիստիցը, դուս գցած պըխտաւիցը, ջէհէլ մօցիքուլիցը,—աբա մէ բանի մէչ վուր սրանք խառնւին՝ դաւիդարաբան կու վիրչանայ:

Տօ, զահլէս գնաց, ես ու իմ հոքին. դժոխք է էլի:

Աթմորթուն ճանչնիլը ուփրօ դըժար է քանց թու սատանին:

Սատանին էլի վուր հեշտութինով կու ճանչնաք, չունքի վունցոր փաթրէթներում՝ ես էլ ու դուք էլ տեհած կանք սրանք պոզեր ունեն:

Աթմորթին է վուր՝ վո՞ւնչ պուզ ունէ ու վունչ պոչ:

Աբա ձիգմէն ո՞վ կանայ դըրուստը իմանայ, թէ հաջի Ամբարցում Առաքելովը ինչ ջինսի մարթ է, ինչ փքրեբու տէր:

Կանա՞ք գիդենայ թէ Լէօն ի՞նչ է փիքր անում ու ի՞նչ է գրում:

Էս կաթղիկոսական խնթրքի մէչ Գասպարիս գժլտած հոքին գիդենայ, էս գրողնիրը վունչմի ջէր դըրուստ չին խօսում, ու էտ է միղէզը, վուր ես վունչ գիշիրնիրն իմ կանում քնի՝ չունքի քէֆ իմ անում ու վունչ ցերեկով դնջանում՝ էնդուր վուրդիփ կուխ հիդն իմ ընկած:

Էքսի օրը կնգամէս քիչ մնաց բաժնւէի. ես իմ դուղինքը հաւաքեցի, մըշակին կանչեցի, ասի, տար «Խաթաբալի» ըէդախցիէն:

Հարևանս վուր ինձ տէհաւ էդ օրումը, հարցրից՝ — դամխմթէվա ես գնում, կօսէ:

—Կնգամէս բաժնւում իմ, ասի:

—Ի՞նչի, կօսէ:

—Չունքի ասի էրազումս կաթղկոսական խնթրքներու վրէն խօսիլ իմ ու վարթապիտ էպիսկոպուսներու անուննիրը շատ ջէր իմ տւի, էտու համա էլ կնիկս կարծիլ է թէ՝ սիրեկնիր իմ պահում ու հիդս մէ գլուխ կռւում է, ասի:

Իժում էն մէկէլ հարևնիրը, միր թաղի զորոդովը, քուրթ դվորնիկը ինձ էլի յիդ՝ տուն տարան ու մոծմութին տւին, վուր ես դուրթ է, վարթապիտ էպիսկոպուզներու վրէն շատ իմ խօսում, համա խատակ մարթ իմ, վուր իմ թաւուր հոքու ճամփու վրէն ման էկող ու ոչովի վրէն աչք չբռնող՝ խիկի Աստուձ չի ստեղծի ու հաուց առաշնութինիրն էլ չին ըլի, չունքի, ասին, առուտեհանից մինչևլի իրիգուն, Գասպարը, կօսէ, խաթաբալայական բայբաղը ձեռին մէ գլուխ աղաք է գնում հոքու ու ուփրօ փուրի համա փիքր անելով է շարժւում, կօսէ:

Կնիկս աւտաց:

Աղբաթը խէր ըլի իլաքի քուրթ դըվորնիկին. գիդի՞ք թէ մարթ է, անտիկա է ես ու իմ Աստուձը:

Իստակ դզբաշի մէջլիսի խաղն է պուտատ:

Մէ մէ ջէր հեստի խրատնիր է կարթում, վուր Էչմիածնի ժողովքումն վուր ըլէր, ասկի գուրձիրը ուփրօ լաւ կէհային:

Աստուձ կինք տայ միր թաղի դոբոդովին էլ:

—Ղուսպոդին, կօսէ, դաշիմ վի վոդկա Սմիրնով նի պիօշ, կօսէ, կաղդա կաթղկոսկի վօպրօս պիշիշ-միշիշ, կօսէ:

Հա էն էի ասում:

Էն օրը գնացի ըէդախցիէն. ճամփին ում ռաստ էկայ՝ կաթղկոսական անդազանիր էին ասում:

Տնիցը մինչևլի ըէդախցիէն վուր քիչ ասիմ՝ քսան վերստ ճամփա կուլի, քսանը չլի՝ տասնուհինգ խոմ կուլի, տասնուհինգ չլի տաս խոմ կուլի, տաս վուր չլի, հինգ կուլի ու կուլի—մայ էտղդամ ճամփի վրէն ում հիդ ռաստ էկայ, մէ դլուխ էն իմացայ խօսելիս՝ թէ էդ վո՞ւնց էլաւ, կօսէ, վուր Էչմիաձնումը էտէնց էլաւ, կօսէ:

—Ի՞նչ ջուղաբ պտիմ տա, ան կանա՞մ տայ:

—Սկի, հալբաթ Աստու կամքն է. ասի:

—Ի՞հ, կօսէ, կաշառւած ես, կօսէ:

—Վո՞ւնց թէ կաշառւած ասի, ու ջոխիս վուր մէբաշ գլխին վրայ չբեբէ՞, ձիր ազիզ արիվը, հեստի ձէնը կտրից, կօխս Շուլաւրի նորահարս ըլէր:

—Կաթղկոսական խնդիրքը էստի ու հիմա ասի կոմբալի զօրութէնի մէչն է ասի, ու դուք ի՞նչ պրաւա ունիք վուր խօսում իք, ասի:

Կոմբալը էրկու ծեր ունէր. իժում էլ ինձ կինադամ չհասաւ մէ ծէրը՝. ձլիւ ճամփէս գթայ:

Աղբաթը խէր—ի՞նչ կուլի վուր հիմի էլ գոզինաղի վրէն խօսինք:

Էս քանի տարի է լաւ գոզինաղ չինք կանում էփի, գոզինաղի համն էլ գնացիլ է, էլ ոչով բախլա չէ թխում. էդ խնթիրքնիրը թողնինք ու կաթղկոսական խնթրքներով եօլա գնանք, իժում էլ ի՞նչ կուլինք:

Խօմ ջլիւղան տնաքանդութին կուլի:

Բաս Նուր Տարութենի համա չըլիտի փիքր անինք:

Մաշ Նուր խիլք չինք ուզի՞ ունենալ:

Էս սհաթիս ես ձիգ ասում իմ, վուր էտու վրէն խիստ շատ փիքր անելու

## ԿԱՐ ԺԱՄԱՆԱԿ




Կար ժամանակ՝ երբ աշխարհականները եպիսկոպոսներին կաշառք էին տալիս պաշտօնական խնդիրների և աթոռակալութեան համար։

Հիմի ժամանակ է եկել, որ հոգևորականներն են աշխարհականներին կաշառք տալիս՝ իրենց մասին անկլամներ գրելու համար։



ՋՈՒԹԱԿԱՀԱՐ ՎՐՈՅՐԸ

(շարժ)



—Փորձուած կինը մինչ այս դրութեան է հասցնում իրեն երկրպագողին։

պարտք ունինք, չունքի, կաթղկոսացունիր շատ ունինք, համա կաթղկոս չունինք. ու խատակ ու լաւ՝ վունց միղը է ճարւում ու վունց նրնգուղ։

Սա ինչ է. սա խօմ խայտառակութին է։

Խաթաբալա ամէն հաուց
Գասպար աղա Կոլատուզով

## ԸՍՆԸՆ ՀԵԹԵԹԸՆՔ

Ես սիրեցի գարնան վարդի
Թերթիկները մշտադալար.
Նրանց ծալքում սիրտս դրի,
Ու նա խնդա՜ց խենթ-սիրահա՜ր...

Անցան օրեր, վարդը չորցաւ..
Ես զրկեցի չքնաղ վարդից.
— Սի՛րտը լացե՜ց...—աչո՛ւնն եկաւ
Ու անջատեց մեզ իրարի՜ց...

Նարգիզ



## ԻՄ ԴՈՒԹՈՐՆԵՐԻՑԸ

—

Քահանան՝ մահւան անկողին ընկած կինտոյին ճաշակելուց յետոյ՝ հարցնում է.

—Որդի, ոչինչ խօ չունէս ասելու, անդերձ մանդերձ խօ չունէս անելու։

—Վա՜... մա՜շ տէրտէր ջան, մա՜շ, անդերձ ունեմ, մա՜շ...

—Դէ ասա, որդի, որ գրեմ։

—Տէրտէր ջան, գրի, հազար թուման, Բարեկործ. Ընկերութենին, հազար թուման, Պէպօ Կակուլի, որ խաղում են, նրանց ընկրութենին, հազար թուման Վանքի շկօլին, հազար թուման էլ ուսրա ու պարապսարապ խալխին...

—Որդի ջան, ախար ինձ էլ մի բան կըտակ արա, որ քեզ միշտ յիշեմ ու հոգիդ արքայութիւն ուղարկեմ է...

—Մաշ աւարեքին հազար թումանը շատ ա, դիփ մէկ ա դոմարումը տանիլ կըտան. հինգ հարիր թուման նրանց, հինգ հարիրն էլ քեզ։

—Ա՛յ, շատ ապրէս... մեղա Աստու, հոգիդ արքայութեան փայ լինի։ ուրախութեամբ բացականչում է քահանան, հիմի ասա, որդի, այդ փողերը ումից պէտք է ստանանք, որ փայ փայ անենք։

—Վէ... ես շատ գիդեմ... դրա համա էլ ես դարդ անեմ, հանդարտ կերպով պատասխանում է կինտօն և հոգին աւանդում։

—

Երևանեան հրապարակի վրայ կինտօն կանգնած նայում է քաղաքային վարչութեան շինութեանը. մի հարուստ Թուրք մօտենալով նրան հարցնում է։

—Այ ախպէր. ինչ ես այդ տներին թամաշա անում։

—Էնէնց էլի, տղղում եմ, տեհնամ պաչինկայ անել խօ չի ուզում,—պատասխանում է կինտօն հոգոց քաշելով։

—Ո՞նց թէ պաչինկայ խօ չի ուզում. յետոյ քեզ ինչ՝ շատ էլ ուզենայ, զարմացած հարցնում է Թուրքը։

—Ինձ ինչ... բաս իմ տների դարդը դու կըքաշե՞ս, ծիծաղելով ասում է կինտօն։

—Միթէ այդ ահագին շինութիւնը քոնն է, հարցնում է Թուրքը զարմացած։

—Իհա՛ ա, քեմաստղ, համա ուզում եմ ծախի, դրա մուիկ տալու պլուխը չունեմ, պարծենալով ասում է կինտօն և ուզում է հեռանալ։

—Մուլափ ախպէր, թէ որ դրուստ քոնն է ու ծախում ես, ես կառնեմ, ասում է Թուրքը։

—Վա՛, ո՞նց թէ իհա, ուզում ես արի դուէր գնանք օթախները մէ-մէկ շա՛նց տամ. հեր օխնած իմը որ չըի, ո՞վ կըթողնի որ տուն գնամ ու խալխին էլ հետս տանեմ. Թուրքի ձեռքից բռնելով բարձրանում է կինտօն քաղաքային տան սանդուխներից և Թուրքին բոլոր սենեակները շրջեցնում։

Թուրքը տեսնելով, որ իրենց ոչ ոք չէ խանգարում և ոչ ոք չի հարցնում թէ՝ ինչ գործ ունեն այդտեղ, հաստատ համոզւում է, որ տները կինտոյինն է՝ սկսում է գնի մասին հարց ու փորձ անել։

—Գիդա՞ս, ախպէր, ես հմի ուրիշ տեղ բան ունեմ, դու ինձ մի տաս թուման բէհ տու ու էստի ինձ մուլափ տու։

Թուրքը ուրախ հանում է հարիւրանոցը և տալիս կինտոյին, կինտօն խսկոյն ծլկւում է, իսկ Թուրքը երկար նստելուց յետոյ, երբ հարցնում է, քաղաքային տան ծառայողներից մէկին, թէ տների տէրը ինչո՞ւ ուշացաւ, նրան, կնծին տալով դուրս են անում այնտեղից։

—

Մի վարժապետ մօտենալով կինտոյին ծաղրական տօնով հարցրեց.

—Այդ ինչո՞ւ է, գլխիդ մազերը սպիտակել, իսկ երեսինդ դեռ էլի սև է մնացել։

—Վա՛յ մէ, վայ մէ, պատասխանեց կինտօն,—մաշ էնդդամ խելք չունե՞ս, որ իմանաս. չես գիդի՞, որ գլխիս մազը երեսիս մազիցը քսան տարով մինձ ա...

—

Կինտոյին դատում էին, որ նա բացի կնոջից և մի սիրեկան է պահում։

—Ի՞նչ ունէք ձեզ արդարացնելու, ասաց դատաւորը կինտոյին։

—Սիրեկանը ինձ քոմագ անելու հմա եմ պահում, պատասխանեց կինտօն։

—Ի՞նչ էք ուզում դրանով ասել։

—Ուզում եմ ասի, որ կնիկս դալմադալ շատ ա սիրում, մի գլուխ հետս կռւում ա ու մի մի ջէր էլ ծեծում ա ինձ. համա ինչ որ ես սիրեկան եմ պահում, բանս լաւ ա գնում, ընդուր որ ինձ թողել են, կնիկս ու սիրեկանս կի մէկ մէկու միս են ծամում։

—

Կինտոյի կինը արթնանալով, դարձաւ ամուսնուն.

—Գէորգ ջան, իրիկուն էրազումս տէհա, միթօմ, դու ինձ հմա օսկէ ահաթ էիր առնում իրա ցեպոչկով...

—Մաշ էլի քնի, էլի քնի, բացականչեց կինտօն, էգէրա հմի էլ տեսնես, թէ էն փողերը որդիան էի ճանգէ, որ քեզմա օսկէ ահաթ էի առնում։

—

—Դուք երբևիցէ նստել էք... հարցրեց դատաւորը կինտոյին։

—Մաշ, վա՜... խօսքը կտրեց կինտօն.—մաշ մի գլուխ խօ ոտի վրայ չիմ բլի կողնած։

—

—Է՛յ կինտօ, վաշի պասպորտ ֆալշիվկի, ասաց ոստիկանը կինտոյին։

—Նետ, գասպադին գարադավօյ, մօյ բաշպորթ խարօշի, մադրամ եա ֆալշիվկի...

Բախօօ



—Տօ Սաքուլ, մեր Թուրքահայ ախպրտիքը էս ինչ բեհեսաբ արին. էտ հոսոնիրը էնքան չուստրի մարթիք ին, վուր իրանք համ իրանց համա ին պատրիարխ ջոգում, համ էլ միզամա կաթղկոս նընդրում.—բաս մինք հնդուհաւի գլխնիր ի՞նք։

—Մինք վուր միզ հնդուհաւացնինք նըրանք ինչ միղաւուր ին. միր լաւ-լաւ զոգրէքը էչմիածնում էն հանգի խելօք ժամ էկան, վուր միր ղօնաղ ախպրտիքը վախվախելով էկան ու ծիծաղելով գնացին...

Կակուլ

## ՕՏԱՐ ԻՒՄՕՐ.

I

## ՄԱՐԴԿՈՒՍ ԾԱԳՈՒՄԸ

(Ամենահին առասպել)

—

Ալլահը,—ա՜յ օրհնւած լինի նրա սուրբ անունը,—երկինք ու երկիր, ծով ու ցամաք, թռչուն ու անասուններ ստեղծելուց յետոյ՝ դադրած, բեզրած լինելով, իր փառահեղ գահի վրայ բազմած՝ հանգստանում

էր... Նրա առաջը դրուած էր արմաւենուց շինած մի հրաշալի սեղան։

Եւ Ալլահը ցանկացաւ՝ աշխարհաշէնքի ապրաման առթիւ՝ մի շիշ ընտիր գինի կոնծել...

Ալլահը չափազանց ուրախ էր առաւել ևս նրա համար, որ այդ շէնքը գլուխ էր բերել առանց դիմելու ճարտարապետների և կապալառուների օգնութեան։

—Է՛յ, առիւծ, ինձ համար մի շիշ գինի բեր,—հրամայեց Ալլահը։

Սակայն առիւծը տեղումն անշարժ կանգնած էր։

—Ես սպասաւոր չեմ,—հպարտաբար պատասխանեց առիւծը։

Ապա Ալլահը հրամանն ուղղում է վագրին, ընձուղտին, եղան, ձիուն, կովին ու նոյն իսկ խոզին։

Բայց ոչ ոք ոչինչ չէր բերում։

Եւ յիշեց Ալլահը, որ ճաշարաններում աբրեցող յաճախորդները սովորաբար գոռում են.

—Ա՛յ մարդ։

Ալլահն այդպէս էլ ձայնեց։ Նրա ձայնի վրայ երևաց մի ինչ որ երկոտանի խղճուկ արարած։ Դէմքի ստորաքարշ արտայայտութեամբ և քծնողական ժպիտով նա Ալլահի համար գինի բերեց ու թաւաղա արեց։

—Լա՛ւ,—ասաց այդ արարածին Ալլահը։—Ապրիր երկրի վրայ, կոչւիր մարդ և թող սպասաւորական-լաքէյական անդուգական հոգիդ առմիշտ տեղաւորուած մնայ քո մարմնի շրջանակում։

—

II

ԿԱՆԱՅՔ

Կանայք այնքան զանազանակերպ ու այնքան իրար չնմանւող արարածներ են, որ նրանց մասին որևէ որոշակի կարծիք կազմելը պարզապէս անկարելի է։

Յունական իմաստասէրները՝ իրանց ուղղուած այն հարցին, թէ կանայք հոգի ասած բանը ունե՞ն արդեօք—պատասխան չկարողացան տալ և հարցը թողին բաց, իսկ յունական փիլիսոփաներից մէկը միայն իր բարեկամի դիմումին՝ «թէ ինչպիսի՞ն պիտի իր կեանքի ընկեր ընտրի», հետևեալն է ասել.

—Խորհուրդ եմ տալիս այդ բանում ճեղընպահ մնալ։ Եթէ ընտրես մի գեղեցկուհու—նա քեզ հաստատապէս կըխաբի, տգեղին վերցնես—հէնց ինքն է քեզ զզւեցնելու. խեղճը—քեզ քանդելու է, հարուստը քեզ իր ստրուկը կըդարձնի, խելօքը քեզ վրայ ուշադրութիւն չի դարձնելու, յիմարը—իր տաղտկալիութեամբը քեզ մահւան է հասցնելու... Ամենալաւն այն է, որ նրանց բոլորին էլ հանգիստ թողնես։

Դ. Բաբուխեանց



ՊԱՏԿԱՌԵԼԻ ԺՈՂՈՎ

(Նւէր հայկական ժողովների էջմիածնի «համազգային» նախապատրաստականից ըսկսած՝ մինչև գաւառական բարեգործական, հոգաբարձական, ծխական, հրատարակչական և այլն)

Առաջին նիստ

(Նմանութիւն)

Բոլոր պատգամաւորները հաւաքւած են։ Ցուրտ ժողովատեղիում օդը բաւականին տաքուկ է դարձել։ Վերին աստիճանի կենդանութիւն է տիրում։

Ընտրում են նախագահ, իր մի քանի տակի մասխարաներով։ Նախագահն այնքան ոգևորւած է իրան ցոյց տւած մեծ պատւից, որ ժողովը դեռ չբացւած՝ պատրաստ է իսկոյն և եթ փակել, ուրախական յուզմունքից գնալ հանգստանալ և գինու քառորդ բաժակ ջրի մէջ 50 կաթիլ էֆիրօ-վալերիական կաթիլներ ընդունել, սրտի այդօրւայ արտակարգ թրթռոցի առաջխաղացութեան դէմն առնելու համար։ (Սովորական մահկանացուներս այդպիսի դէպքերում կէս բաժակի ջրի մէջ 20—25 կաթիլը բաւարար ենք համարում)։

Նախագահ.—Յարգելի պատգամաւորներ, նախ քան հայհոյաբանութիւնների, ուզում եմ ասել, ընդդիմախօսութիւնների դիմելը, կարևոր եմ համարում յայտարարելու, որ բակումը, մի առանձին ընդարձակ սենեակում, բացւած է վիրաբուժական ժամանակաւոր բաժանմունք՝ բժշկական միջոցների բաւականաչափ մեծ պաշարով, անհկալելի դէպքերում անմիջական օգնութիւն հասցնելու համար։ Ատեանը բացւած է։ Խօսենք

ՖԵԼԻԷՏՕՆ

ՀԱՆԴԻՊՈՒՄՆ ՊԱՀԱՐԱՆԻ ՄԷՋ

—

Զալտիկեան միջին հասակի մարդ էր, և ամուսնացել էր մի շատ երիտասարդ և բաւականին գեղեցիկ կնոջ հետ, պէտք է ասել որ, նաև շատ կասկածոտ։

Նա կասկածում էր, որ կինը իրեն դաւաճանում է, բայց կնոջ մեղաւորութիւնը ոչ մի բանում չէր տեսել, որպէսզի փաստ լինէր ձեռքին...

Զալտիկեանը բնաւորութեամբ շատ խեղճ մարդ էր, և պատւասէր. նա վախենում էր, որ մի գուցէ կինը դաւաճանէ իրեն և իր պատիւը ցեխոտէ։

Եւ ահա մի օր Զալտիկեանը վճռում է, մի օյին խաղալ կնոջ գլխին, և նրան բռնել յանցագործութեան մէջ։

Մի երեկոյ նա դառնում է կնոջը և ասում.

—Գիտես, Մարիամ, ես վաղը մասնաւոր գործերով գնալու եմ գիւղը, և մի քանի օր պէտք է ուշանամ...

Կինը լսելով այս, ուրախութիւնից վեր թռաւ տեղից և գրկելով ամուսնուն ասաց.

—Այդ շատ լաւ կըլինի Գէորգ, դու գիւղից ինձ համար մածուն, սեր կըբերես, այնպէս չէ,—ասաց նա և համբուրեց ամուսնուն։

—Այո՛ սիրելիս, անպատճառ,—ասաց Զալտիկեան, և ընթրիքից յետոյ գնաց քընելու։

Առաւօտ վաղ Զալտիկեանը կառք նստեց և ճանապարհւեց, բայց անցնելով միւս փողոցը նա իջաւ կառքից և վերադառնալով իրենց փողոցը, թագնւեց փողոցի մի անկիւնում իրենց տան մօտիկ։

Նա տեսաւ թէ ինչպէս իրենց տան դուռը բացւեց և կինը դուրս գալով փողոց և չորս կողմը նայելով մտաւ միւս փողոցը...

Զալտիկեանը դուրս գալով թագստատեղից, քայլերը ուղղեց դէպի տուն։

Զանգը քաշեց. աղախինը բանալով դուռը և տեսնելով իր պարոնին, զարմացած ասաց։

—Ինչո՞ւ այդպէս շուտ վերադարձաք, պարոն...

—Սո՛ւս կաց, Նատաշա, դու պէտք է ինձ օգնես... ես կնոջս խաբել եմ, որպէսզի, մոլորեցնելով նրան, իմանամ նրա գաղտնիքները...

—Ի՞նչպէս...

—Նա, կարծեմ, սիրեկան ունի, ես ուզում եմ բռնել նրան յանցագործութեան տեղում... ահա քեզ 20 րուբլի և ասա ինձ ինչ որ գիտես, ես պէտք է թագնւեմ կնոջս ննջարանի պահարանում... դու նրան ոչինչ չասես այդ մասին...

—Բայց եթէ տիկինը իմանայ...

—Ո՛չ, նա չի կարող իմանալ... այժմ ասա ինձ, ո՞ւր գնաց նա...

—Նա գնաց իր սիրեկանին բերելու...

—Այդ լաւ է,—ասաց Զալտիկեանը.

Յանկարծ լսեց զանգի ձայնը։

—Ա՛հ, այդ նա է, ձեր կինը. շուտ թագնւեցէք, եթէ ոչ ձեզ կըտեսնի...

—Լաւ, դու մի փոքր ուշ բացիր դուռը, մինչև որ ես կըթագնւեմ...

Զալտիկեանը, դիմեց դէպի ննջարան և թագնւեց պահարանում...

Զալտիկեանի կինը ներս մտաւ իր ննջարանը մի երիտասարդ պարոնի հետ... Նա փակելով ննջարանի դուռը, նստեց երիտասարդի ծնկան վրայ և կրքոտ համբուրում էր նրա շրթունքները։

Նա դարձաւ երիտասարդ պարոնին և ասաց.

պտին, նա ակունջը կանչի մէր ակցիզնիկ Մօսէս բէկը ըստեղ պիտար, տէսնար իւշունցը հունց կնի։

Մէր «Ղարաբաղ» կազէթխանի բաշչին—մեծը պէտմա թող չանի, որ կազէթը կուի մէյդան, քեալվասարայ շինին և հու որ օգի մտնի, հինաբը նշանց տայ և իւրան թալըղ հեսաբը քաշի։ Հունց պիտի անի որ վթանան, էլան, տանան դադարգին ընկած մեր աղբերքը կազէթը օրախ սրտու կարթին և կապւին մըզնըհետ, մեր սումարաննէրի, մեր հըյրէնիքի եթիմանոցի, ջիւլհականոցի հետ, որը փողա, որը խէլքա, ոըը ղլամա, որը գործա, ամեն մինը իւրան ղվաթը կեօրայ։ Հունց պիտի անի որ մեր շհարի պայծառութեան, լուսաւորութեան համար քեարըլու, հըջըթական մարդկանց օշը, մէթկը, սէրտը չարժի որ քաղաքը շէնացնին։

Հունց պետմա անի, որ կազէթի «Ողջոյն» առաջնորթողում գիրւած մակէրի կեօրայ քինայ և թող չանի որ «մեր ցաւով տարեկլու երազը հոգամ, ճշմարտութեան, արդարութեան անկեղծութեան և հարազատութեան, խօսքը ճակատին, լուսաւորութեան, քաղաքակրթութեան մաքուր, ջինջ ու յստակ պատգամը թեւին մեզ մօտ եկող թերթը» միւս թեւին էլ հայ հօյանքի, իւշունցի բայտաղնան թօրբան բերի։

Հեալա շնորհակալ ընք, որ իւշունցը լօխ չըն տեաճալ, լըմընք որ շատը պահալըն բօխչամէջի, որ թղըթադա դիւս բերին։ Աստւած տ՝ ամման ծառ իւրան բարը-պտուղը, ամման ծաղիկ իւրան հոտը օնի, ամման աման էլ իւրան մէջումը իլածին ոտը կը փչի։ *)

**Քեօհնայ դեամբաշ Ակուճ**



*) Ուշունցներու ուստաբաշի ու յայտնի «գող-գրուղ» Վարթանէս Փափազովին վուր էտի տանէք, ուշունցներ կու լսիք, մաշխօմ խրատնիր չէք լսի Աւետրանից, ջէր էլի լաւ է, վուր ուշունցներ է տալի, տօ անաշէն՝ իր գրամէն ուրիշ բաներ էլ սպասեցէք։

**Դաս. Կալ.**

# ՄԱՆՐՈՒՔ

## 1. Ջիու չարչիի մօտ.

—Ա՜յ թէ ինձ լաւ խաբեցիք հա։ Նա ի՞նչ ձի էր, որ վրաս ծախեցիք։ Մի ոտով կաղում է։

—Ի՞նչ է որ, հէր օխնած. բա էն իրեք ոտը որ սաղլամ է, հաշիւ չես անում...

—

## 2. «Նատուրալիստը»

—Դէհ, այժմ ասացէք տեսնեմ, միայն առանց քաշւելու, ինչպէ՞ս է դուր գալիս ձեզ իմ պատմւածքը։

Հիանալի է։ Նրա մէջ ամեն ինչ իրական է, ամեն ինչ բնական։ Դուք, ազնիւ բարեկամ, նատուրալիստ էք։ Ձեզ մօտ նոյն իսկ գողի տիպը—հէնց ինքը կեանքն է։ Օրինակի համար. այն ամենը, ինչ որ դուրս է գալիս գողի բերանից,—նոյնպէս գողացւած է։ Ձեմ յիշում որտեղից է գողացւած, բայց յամենայն դէպս՝ գողացւած է։ Ձեր գրւածները յիշեցնում են ինձ Վրդանէս Փափազեանի... երկերը։

«Բ.»

# ԲՈՑ ՆԱՄԱԿ ՊՈԼՍԻ ԷՖԷՆԴԻՆԵՐԻՆ ԺՈՂՈՎԻՆ

Էֆէնդինե՛ր, ի՞նչ անուն տալ
Պոլսի Ազգային Ջոջերին,
Որ ուխտել են միշտ խուլ մընալ։
Ազգի արդար պահանջներին։

Ինչպէ՞ս Ազգային կողովը *)
Բար ճըխտած իր ականջներին
Մեր խընդանքը նետեց ծովը,
Լուռ մընած լուրջ տըրտունջներին։

Ինչպէ՞ս տեղապահ Մանկունին
Եւ մեր Եփրեմ առաջնորդը,
Աջակցեցին այդ ժողովին.
Ա՜խ, ես գոցա օխտը պորտը...

Ազգն իրաւամբ պահանջում էր
Օրմանեանի դատն ուսարտել,
Բայց ժողովն ինչպէ՞ս յօրանջում էր.—
Ի հարկէ, մեր ձայնը խեղդել...

Սակայն, չէ՞ որ Օրմանեանը
Ամբաստանած մի անհատ էր,
Որին ազգի բաձր ատեանը
Կանուխ թէ ուշ պէտք է դատէր.

Եթէ նա, ճի՛շտ, աւազակ էր,
Կամ դաւական մի Վասակ էր.
Եթէ ազգի թըշնամին էր,
Կամ Սուլթանի խընամին էր։

Եթէ, յանկ, նա մի գող էր,
Կամ ազգային փող ուտող էր.
Եթէ նա մի կեղտոտ մարդ էր,
Կամ, ըստ կործոց, մահապարտ էր,

Թէ նրա խօսքով էր Սուլթանը
Մոխիր շինում Հայաստանը,
Կամ սարքում—այդ [illegible]
Ադանայի կոտորածը։

Էֆէնդինե՛ր, եթէ Արհին,
Իսկապէս, մի շանտաժիստ էր
Եւ նորա ծեր պարանոցին
Դիզւած մեղքը, իրաւ, ճիշտ էր.—

Մի շուտափոյթ պէտք էր վըճիռ.
Որ լուծէր մեզ այդ մութ կընճիռ,
Որ մենք նոյնպէս հասկանայինք
Եւ մեր եղբարք միանայինք՝

Անարժանին յայտնել նողկանք,
Արհամարհանք և մեր զըզւանք.
Որ այդ օձը, այդ չար իժը
Ստանար արդար իր պատիժը...

Բայց եթէ նա թայփայական
Ծուղակն ընկած աղաւնեակ էր,
Կամ թէ նորա զուտ հայրական
Խիղճը մաքուր և իպտակ էր,

Բայց եթէ նա, Օրմանեանը,
Այդ կեղտերից միշտ ազատ էր,
Իսկ ազգային բարձր ատեանը
Դիտմամբ գործը կըպատպատէր *).—

Այն ժամանակ, էֆէնդինե՛ր,
Ի՞նչ անուն տանք ձեր Կողովին,**)
Որ լըցուցեց մի կեղտոտ դեր
Հասնելու իր նըպատակին։

Ինչ անուն տանք, որ կարենաք
Բընորոշել նորա հոգին.
Խարդա՞խ, զըծո՞ւծ, աղբի տակա՞նք,
Թէ՞ չէֆերից յարգւած բազին...

Սակայն կըգայ՝ մի ժամանակ,
Որ կըլինիք ծաղր ու ծանակ,
Եւ «անպատւած» հայ-կովկասցին
Մո՛ւր կըքըսէ ձեր երեսին...

**Լիլիպուտ**



*) Գրչի սխալ է՝ «ժողով» պէտք է կարդալ։ Ծ. Հ.

*) Պատէպատ տալ, քաշքշել։
**) Պէտք է կարծել թէ ժողով։

# ԴԵՐՁԱԿԻ ՄՈՏ



—Ես էն ուրիշ դերձակների նման չեմ, հաւատացէք ճիշտ եմ ասում. ուրիշները կտորից գողանում են. դա ինչ կընշանակէ, կընշանակէ՝ աւելի լաւ է մարդու գրպանից փող հանել, քան թէ մի պստիկ կտոր իւ-րացնել...

—Ես էլ նոյն կարծիքի եմ—եղբայր ինչի ես գողութիւն անում, աւելի լաւ է աշխատիր հնարագէտ եղիր։

—Այո մարդս միշտ պէտք է հնարագէտ լինի և աշխատի։

—Այո, աշխատի։



ԱՐԹՈՒՐՄԱ

ეროვნული ბიბლიოთეკა

# ՊՈԿԱԾ ՏԵՐԵՒՆԵՐ

**1. Տրամօտական խանութում.**

*Ջահիլ օրիորդ.*—Ունի՞ք արդեօք «Հաւատարիմ սէրը»:

*Գործակատար.*—«Հաւատարիմ սէր» մեզ մօտ չկայ, օրիորդ. չէ՞ք ցանկալ «Իմ սիրտը»:

*Ջահ. օր.*—Աւելի լաւ է «Տեսակցութիւնը»:

*Գործակ.*—Գուցէ կամենաք... հիանալի բան է—«Սիրային խաղը»:

*Ջահ. օր.*—Զորս ձեռքիդ է: Լաւ: Փաթթեցէք նոտաները և հաշիւը մօրս անունով գրեցէք:

—

**2. Ատամնաբոյժը.**

*(Նուէր Կիկօլօ Ճակճակօ՛ին)*

*Օրիորդը.*—Գիտե՞ս, անուշիկս, մայրիկս բոլորովին չի հաւատում, որ ես քեզ միայն և միմիայն ատամներիս համար եմ այցելում:

*Ատամնաբոյժը* (համբուրելով նրան).—Սպասի՛ր, սիրունիկս. ես մայրիկիդ շուտով հաշիւ կուղարկեմ և այն ժամանակ նա հաստատ կըհաւատայի:

—

**3. Լաւ միջոց.**

Երկու հոգի, մինը բանաստեղծ, միւսը բանա-քանդ, նստած զրուցում էին:

—Ի՞նչ կարծիք կարող էք յայտնել իմ նոր ոտանաւորի մասին: Ահա նա, մատիտով գրուած:

—Ոչի՛նչ, ես լաւ միջոց գիտեմ. հարկաւոր է ռէտինով մի լաւ ջնջել և նա կանցնի:

—

**4. Ցգէս մայրը.**

—Մայրի՛կ, ո՞րտեղ է հոսում Նեղոս գետը:

—Չգիտեմ, զաւակս:

—Դու չգիտե՞ս: Տես է՛, քո այդ տգիտութեան համար ուսումնարանում էգուց ինձ պատժելու են:

—

**5. «Զբաղուած էին...»**

—Օրիո՛րդ, հետաքրքիր է, երէկ Մեծփողոցի անկիւնում կանգնած՝ Սեդրակ Վարդանեանի հետ ինչի՞ մասին էիք զրուցում:

—Ոչ մի բանի մասին, որովհետև մեր բերանները խիստ զբաղուած էին:

—Զբաղուա՞ծ, ինչո՞վ:

—Հը՛ը, համբոյրների տարափով:

—

**6. Լաւ բժիշկը.**

—Թոյլ տուէք, պարոն բժիշկ, շնորհակալութիւն յայտնել ձեզ, ձեր՝ ինձ համար գրած դեղատոմսի համար:

—Ի՞նչ է որ, բաւականաչափ օգնե՞ց ձեզ:

—Չափազա՛նց:

—Քանի՞ շշիկ ընդունեցիք:

—Իսկապէս ասած՝ ես ոչ մէկն էլ չեմ ընդունել, բայց քեռիս մէկը միայն խմեց և ի վերին Երուսաղէմ ճանապարհուեց, իսկ նրա միակ ժառանգը ես եմ:

—

**7. Արտիստիկ օջախ.**

—Մեր օջախը խիստ արտիստիկ օջախ է,—ասում էր մի օրիորդ.—հայրս խաղում է բորսայում, մայրիկս՝ ձիարշաւներում, ես ու քոյրիկս՝ լօտօ, իսկ եղբայրս՝ բիլարդօ:

—

**8. Ո՞վ աւելի կուլտուրական է.**

*Ցոյնը.*—Մեր կուլտուրան աւելի հին է: Հնագիտական հետախուզումների ժամանակ մեզ մօտ գտնուել է երկաթաթելեր. դա ապացոյց է, որ հնում մենք ունեցել ենք հեռագիր:

*Հրէան.*—Իսկ մեզ մօտ Պաղեստինում երկաթաթել չի գտնուել. նշանակում է մեզ մօտ արդէն վաղուց գոյութիւն է ունեցել անթել հեռագիրը:

Համայնացրեց՝

**Եզօպ ծայրահեղ վարդապետ**

# ՄԸՆԿԸԿԸՆ ԸՆՄԵՂ ԶՐՈՅՑ

Մի պայծառ օր, մայիսին,
Քոյր և եղբայր միասին,
Թափառելով, պէս թաղի՝
Պատահեցին մի խողի:

—Նայի՛լ, Աննի՛կ, այն խողին՝
Տըլաքուելու պատրաստ է.
Տե՛ս ինչքա՜ն ծալք կայ վըզին՝
Մըխիթարից էլ հաստ է...

—Ի՜նչ յիմարն ես, Կիլակո՛զ,
Աննիկը ասաց՝ զարմացած,
Մըխիթարի նըման խոզ
Ես իմ օրում ցեմ տեսած:

**Լիլիպուտ**

# Պ ո ս տ - Ա ր կ ղ

Черезъ Баку—Рештъ Императорское Россиское консулство պ. Գաբրիէլ Շահբազեանին.—Ձեր յօդուածների համար հետևեալ պայմանները,—դուք պէտք է կոնսուլխանիցը դուրս գաք, և գնաք Եասնաեա Պօլիանա, ամեն մի յօդուածի համար կանխիկ կըվճարէք հինգ հարիւր մանէթ. եթէ խուրդայ մեայ՝ կըտանք,

*Թիֆլիս, Օր. Նինա Բագրատովնա Ն... նեանին.*—Ձեր փեսացուի պատկերը մեր թերթում տպելը անյարմար է, տպեցէք ձեր սրտի մէջ:

*Երեւան, տիկ. Նթ. Մ...եանին.*—Ձեր գրուածքի նիւթը աւելի Սինոդի համար պէտք կըգայ:

*Բաթում, պ. Ն. Ա...եանին, գրում էք՝—*

Սիրում եմ գարուն՝ երբ
Վարդն է բացուած,
Սիրում եմ ամառն՝ երբ
Դեանքն է եռում,

Այդ դէպքում սիրեցէք իս սէր Աստծոյ և՝

Աշուն՝ երբ մրգեր կան շատ
եւ ձմեռը ցուրտ՝
երբ ծիւն կուգայ պուտ-պուտ:

*Թիֆլիս, բանաստեղծ Աւ. Մաւ...եանին.* գրում էք՝

Չայն տուր ով ծովակ—
Քեզի կըկանչեմ.

Ինչի չես խօսէր...
Ողբանցին դու նա...

Ասացէք խնդրեմ, Վ. Փափազեանից հն դաս չէք առել: Այդ նրս ժանր է: Դուք ձեռք քաշեցէք:

# ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ФАБРИКИ
А·ЭНФІАДЖІАНЦА
ПАПИРОСЫ
ИНТЕЛЛИГЕНТНЫЯ
ЦѢНА
25 шт. 15 к.
10 ш. 6 к. 100 ш. 60 к.

ПАПИРОСЫ
ЭКСТРА
15 шт.
6 коп.
ФАБРИКИ
А.ЭНФІАДЖІАНЦА

ПАПИРОСЫ
ГОЛУБКА
10 шт.
3 коп.
ФАБРИКИ А.ЭНФІАДЖІАНЦА

ՆՈՐ ՎԷՊ

ԵՐՒԱՆԴ ԳՕՇ

ԿԱՐԱ-ԴԱՐՒԻՇԻ

ԳԻՆԸ 50 Կ.

Վաճառւում է Թիֆլիսի բոլոր գրավաճառանոցներում:
Հեղինակից բերել տուողը ճանապարհածախս չի վճարում: Դիմել՝ Тифлисъ, Ерусалимскій пер. 12. А. Генджіану. Նոյն տեղը վաճառւում է «Ռուս նորագոյն գրողներ» ՍԵՐԻԱ. վեց գրքոյկ ճանապարհածախսով 30 կոպ. կարելի է մարկաներով:
10—9

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ

Մ. ՏԷՐ-ՄԻՆԱՍԵԱՆ

վերսկսել է հիւանդներին ընդունել. ատամների և բերանի խոռոչի վերաբ.: Տեխնիկ. աշխատանքների համար հրաւիրուած է արտասահմանից ատամնաբոյժ տեխնիկ, որը պատրաստում է ոսկէպատ ատամներ (couronnes), ոսկէշար ատամներ առանց կաուչուկի (piecènor), նաև ողջ ատամնաշարքեր (pait ou brische), ամբողջ ատամների վրայ պտուտակաւոր ատամներ (Dent à piucaut) և մայր ատամների վրայ ադամանդով բանիլ (Dent á diamantés): Ընդունելութիւնը՝ առ. ժամը 10—2, երեկ. ժամը 4—6, կիրակի օրերը ժամը 10—12-ը:
Միխայլօվսկի պր. № 43
100—50



ՍԱԳՈՆ «ԳԻՐԱՆԻՆ»
— Ա. ՐԱԼԼԷ ԵՒ ԸՆԿ.» ՄՈՍԿՒԱ —
Պահեստը Թիֆլիսում, Գոլովինսկ. պր.
— Պահանջեցէք ամենուրեք —
52—5

Լոյս տեսաւ եւ վաճառւում է

ԲԱԽՇՕ

ԾԱՀԱՆՈՒՅԻ ԽՍՏՕՐԻԷՆ

ԳԻՆՆ Է 5 Կ.

Դիմել՝ Пятигорскъ, типографія Сукіасянцъ и Лысенко. Мамиконянцу
Փողի տեղ կարելի է ուղարկել փոստային մարկաներ։
10—2

Первокл. ресторанъ
„АННОНА“
„Зданіе Артистическаго Общества“
Сод. Я. Т Бондаренко Ежедневно отъ 2 час. до 5 час. пополудни и вечеромъ отъ 10 час. до 2-хъ час. ночи. **играетъ вновь приглаш. итальянскій струнный оркестръ, съ пѣніемъ,** участіемъ пѣвиц -г-жи Сакко и Марія Оландезе и баритона Джелларо Оландезе, подъ управленіемъ САККО.
ЗАВТРАКИ, отъ 11 час. до 1 час. дня 80 к. Обѣды, отъ 1 час. до 5 час. пополудни: изъ 2-хъ блюдъ—60. трехъ—90 к. и четырехъ—1 р. 20 к. Кухня Европейская и Азіятская билліарды. Имѣются кабинеты.
Получены Сибирскіе рябчики и устрицы. 52—30

ԼՈՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ ԵՒ ԾԱԽՒՈՒՄ ԵՆ՝
ԵՐԳԵՑՈՂՈՒԹԻՒՆՔ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ Ս. ԵԿԵՂԵՑԻՈՅ
Բազմաձայն մշակմամբ Ռ. Ղ—ի։
Ա. Տէր ողորմեայ (Արի Աստուած 3 №) Քառաձայն խառն խմբի համար, Պարտիտուրան՝ . . . . . 30 կ.
Բ. — Հանգստեան. (Ննջեցելոց կարգի. 8 №) Քառաձայն խառն խմբի համար. Պարտիտուրան. . . . . 60 կ.
ՆՈՅՆ ՀԵՂԻՆԱԿԻ
Օրհներգ Հայրապետական. «Բարէ քանի հրաշափառ»։. Քառաձայն խառն խմբի համար. Պարտիտուրան՝ . . 40 կ.

Вышли изъ печати и поступили въ продажу:
Пѣснопѣнія армянской церкви
въ многоголосной обработкѣ Р. К.
Ор. I. „Ари-Аствацъ„ [запричастный, 3 №) для 4-хгол. смѣш. хора. Партитура — — — — 30 к.
Ор. II. Пѣснопѣнія Панихиды. (8 №), для 4-хгол. смѣш. хора. Партитура — — — — 60 к.
ТОГО-ЖЕ АВТОРА.
Армянская Патріаршая Кантата „Бабе“, для 4-хгол. смѣш. хора. Партитура — — — — 40к.
Главный складъ изданій: МОСКВА, Неглинный проѣздъ. 14. Музыкальная Торговля „П- Юргенсонъ“.

Նորին Կայսերական Բարձրութիւն
ՄԵԾ ԻՇԽԱՆ
ՆԻԿՈԼԱՅ ՄԻԽԱՅԼՈՎԻՉԻ
ՊԱԼԱՏԻ ՄԱՏԱԿԱՐԱՐ
ԱՌԵՒՏՐ. ՏՈՒՆ Ն. Ի. ԲՈՋԱՐՋԵԱՆՑ ԵՒ ՈՐԴԻՔ
Թիֆլիսում (1858 թուից)
ՓՈՐՁԵՑԷՔ! ՆՈՐ ՊԱՊԻՐՈՍՆԵՐ!
ՀԻԱՆԱԼԻ ՀՈՏՈՎ! ԲԱՐՁՐ ՏԵՍԱԿԻ!
ԱԷՐՕ
ԸՆՏԻՐ ՀԱՄՈՎ! ԳԼԽՆԵՐԸ ԾԱԼԱԾ!
Իսկը տաճկական թութունից։ Ջոկովի թերթերից, դուրեկան հոտով։
10 հատը 10 կոպ. ● ● 25 հատը 25 կոպ. ● ● 100 հատը 1 րուբլի 5—1




—Ի՞նչ ենք արել անցած տարին։

—Նախ և առաջ՝ մինուս բարքերը ապականուել են, էլի մինուս—լեզուն ընտանիքից վռնդել ենք, էլի մինուս—ազգային սովորութիւնները արհամարհում ենք—էլի մինուս—կաթողիկոսական խնդրում վատ դեր խաղացինք, էլի մինուս—տարին անբերրի էր, առևտուրն ընկաւ, դպրոցները անպէտք են, գործ չկայ...

—Բաս պլիւսը՝—

—Պլիւս էլ կայ, բաս չկա՞յ՝ պլիւս է՝ խելքներս աւելացել է, յիմարներին և շանտաժիստներին այլևս չենք հաւատում. բայց ինչ էլ որ լինի բացը շատ է սիրելիս։